



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 14.02.16 թ.
Ելք N° 013

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ, որ «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը հարկ վճարողներից առաջարկություններ և դիտողություններ ստանալու նպատակով սոցիալական ցանցում ներկայացրել էր հարկային մարմնի պաշտոնական կայքում տեղադրված «ՀՀ Հարկային օրենսգրքի» նախագծի վերաբերյալ հղումը՝ առաջարկելով բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացվել իրենց դիրքորոշումը նախագծի վերաբերյալ:

Կից ներկայացված է վերջին երկու օրերի ընթացքում նախագծի վերաբերյալ սոցիալական ցանցում արտահայտված կարծիքների և արված մեկնաբանությունների քաղվածքը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

Քաղվածք սոցիալական ցանցից

«ՀՀ Հարկային օրենսգրքի» նախագծի վերաբերյալ վերջին երկու օրերին հարկ վճարողների կողմից արտահայտված կարծիքների և արված մեկնաբանությունների վերաբերյալ

- նախաքննական և քննչական մարմինները պետք է տարանջատել հարկային մարմնից,
 - պատասխանատվության կոնկրետ չափեր սահմանել պետական պաշտոնյաների համար իրենց գործառույթները ոչ պատշաճ կատարելու համար, իսկ հարկ վճարողներին հատուցել հարկային մարմնի արտաբյուջեից,
 - հարկային մարմնի կողմից վարչական պատասխանատվության վերաբերյալ ամեն մի անտեղի ծանուցում ուղարկելու համար հարկ վճարողի պաշտոնատար անձին վճարել յուրաքանչյուր դեպքի համար 10 հազար դրամ,
 - բացառել քննիչների որոշումների հիման վրա պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումները,
 - հարկային մարմնի քննչական մարմնի աշխատակիցների համար կազմակերպել հարկային ոլորտին վերաբերող մասնագիտական դասընթացներ,
 - ներդնել հարկային մարմնի կողմից սխալներ իրականացնելու դեպքերում ներողություն խնդրելու մշակույթը՝ գրավոր տեսքով,
 - Եթե Ձեր մյուս բոլոր առաջարկները ընդունվեն, էս մեկը ոչ մի շանս չունի: Նման դեմքերը ներողություն չեն խնդրում:
 - վերստուգումների դեպքերում բացառել սուղանքների կիրառումը,
 - Բոլորի շահերից բխում է օրենքի չդեֆորմացված կիրառումը, որը կարող է իրականացվել նաև ներկայումս, առանց օրենսգրքի առկայության: Հետևաբար, կարևոր չի ինչ է գրվում, այլ կարևոր է թե ինչպես է այն կիրառվում,
 - Այ էս արդեն նորությունա... էդ երբվանից հաշվապահների դերակատարության կարիքը եղավ օրենսդրություն մշակելիս: Միևնույն է ցանկացած կատարյալ օրենք տվեք մեր հարկայինին, նրանք դրանով դժոխքի կվերածեն Հայաստանի բիզնես դաշտը,
 - Իսկ համոզված եք, որ հաշվապահների կարծիքը կամ առաջարկները հաշվի են առնվելու?
 - Սահմանել եկամուտների ու գույքի համընդհանուր ու համապարփակ հայտարարգրման կարգ: Հայտարարագրում չնշված գույքը և եկամտի աղբյուրները բռնագանձել/պետականացնել: Պաշտոնական անձի հայտարարագրված տարեկան եկամտի 1 % ավել ստացված «նվերները» հարկել 200% + քրեական պատասխանատվություն:
- «Ընկերներից» ստացված և մեկ տարվա ընթացքում չվերադարձված պարտքերը նույնպես:
Մեկ անձի հաշվարկով 100 հազ. ԱՄՆ դոլարից ավել անշարժ գույքը հարկել 20% դրույքաչափով/որոշ սոցիալական և գյուղատնտեսական արտոնություններով/:
- Սահմանել շքեղության հարկ:
ԱԱՀ կամ վերացնել, կամ սահմանել 10-12%:
Եկամտային հարկի սանդղակը փոփոխել.
մեկ տնային տնտեսության տարեկան մինչև 20 հազ ԱՄՆ դոլար եկամուտը սահմանել չհարկվող:

20-ից մինչև 100 հազ. ԱՄՆ դոլար-13%,

100-ից բարձր 20%,

- Հարկային օրենսգրքի 366-րդ հոդվածով (Վերստուգումներ և կրկնակի ստուգումներ) վերստուգում իրականացնելու հետևյալ հիմքն է նախատեսված. <<համալիր հարկային ստուգման արդյունքում կազմված ստուգման ակտը դատարանի կողմից լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչվելու դեպքում>>:

Անվավեր ճանաչվելուց հետո վերստուգում սկսելը անթույլատրելի է: Նման քայլով փորձ է արվում <<շրջանցել>> արդարադատությունը, դատական պաշտպանությունը դարձնել անիրական:

Անվավեր ճանաչումը պետք է հիմք հանդիսանա հարկային մարմնի պաշտոնատար անձանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

- Առաջարկում եմ նոր տերմին մտցնեն անվերջ ցիկլիկ ստուգում:

- ՀԴՄ ստուգման և հսկիչ գնման ժամանակ ստուգման կամ ուսումնասիրության հանձնարարագիրը տրամադրվում է ոչ թե խախտման արձանագրման պահին, այլ մինչև ստուգման ավարտը (առանց հանձնարարագրի ստուգումներ իրականացնելու ռիսկ): Հարկային օրենսգրքի նախագծում հաշվարկել են, որ ԱԱՀ արտոնությունները չափից դուրս շատ են և պետք է դրանք կրճատել, մասնավորապես, առողջապահության մասով ԱԱՀ արտոնությունները առաջարկվում է վերացնել:

Սրանք դեռ ճշացող մասերն են, ռիսկերը ուղղակի ահավոր շատ են:

- Չի կարելի թույլ տալ բժշկական սպասարկումն ու ընդհանրապես առողջապահական ոլորտին վերաբերող- ԱԱՀ-ով չհարկվող բժշկական պարագաները և այլն ... դարձնել ԱԱՀ-ով հարկվող... Առանց այդ էլ մեր ազգաբնակչությանն անհասու թանկ բուժ. սպասարկումն էլ ավելի աստղաբաշխական գներ կունենան....Իս կ ստուգումների մասով-- շատ ավելի վատ հետևանքներով է հղի այդ նախագիծը:

- Իսկ ինչ կասեք հարկայինում կոռուպցիայի մասին... կամ "չդգող" հարկատուի գլխին 10-11մլն դրամ տուգանք գրելու պրակտիային....

- և ի վերջո. բարձրացրեք տեսուչների աշխատավարձը, որ շահագրգռված լինեն լավ ու մաքուր աշխատեն ու որ չասեն..."դե 110'000-ով ոնց ընտանիք պահենք".... ինքան էլ, որ գիտակցում եմ որ դա հարկատու խնդիրը չէ և չխեղեք է լինի բայց հասկանում եմ, որ իսկապես 110'000-ով ընտանիք պահել չի լինի ու այդ ցածր աշխատավարձը արված է որ հենց տեսուչները շահագրգռված լինեն կոռուպցիոն գործարքների մեջ

- և ի վերջո եթե խոսում ենք ազատ շուկայական տնտեսության հարկային համակարգի մասին այսպես ասած "տեսչության պլան" ասվածը ինչ գաղափար ու հասկացողություն է..... տնտեսություն չկա (եթե հանենք ինֆլյացիան ապա մեր տնտեսությունը ունի հետընթաց) բայց տեսչության պլանը պետք է տան ու եթե չէ ուրեմն գործի է դրվում 150'000 ՀԴՄ տուգանելու արատավոր պրակտիկան: